

Թաղերգում . . . . . 14 դրան  
Գաղափարներում . . . . . 20 դրան

Ա Ր Տ Ա Ս Ա Ն Մ Ա Ն

Ուղևոր . . . . . 4 թ. 50 կ.  
Թուրք . . . . . 50 դրուշ  
Երոպա . . . . . 12 ֆրանկ  
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 ս.

Յայտարարությունների վճարը  
Առաջին երեսում տողատեղի 10 շահի  
Զորքող . . . . . 5

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրության հասցեն՝ Թաղերգ  
Միտկ-ի խմբագրություն կամ Tauris (Perse)  
Rédaction du journal Armén. «MITK»

# ՄԻՏԿ

## ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԲԱՆԱԲԱԿԱՆ

اداره روزنامه «میتک»

### ԽՄԲԱԳՐՈՒՄ ԿԱՆՈՒՆԵՐ

1. Մեզ գրողները խնդրում են զերեք օրվա ընթացքում հանձնել մեր ամսագրի 60-ամեայ յոթերեանի առթիվը:
2. Խմբագրությունը իրեն է վերապահում խրատներ, ստացուած յոթուածները փոփոխութեամբ և կրճատութեամբ հրատարակելու:
3. Մեր մերժում ենք յուրաքանչյուր ուղղադրական հերձուածը և մեզ ենք վերապահում խրատներ, ստացուած նիւթերը տպել մեր քննութեամբ ուղղադրութեամբ -ու-ով:
4. Չստացուած կարճ յոթուածները չեն վերադարձնուած Ուղարկուած և չստացուած հրկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պատի ծախսը:
5. Ձի տպուի ոչ մի յոթուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յոթուածագրի անուն ազգանունը:
6. Բաժանորդները թերթ չստանալու պարագայում յետոյ տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնն իրեն զերծ է համարում պատասխանատուութիւնից:
7. Չստացուած յոթուածների համար խմբագրութիւնն բացառութիւններ չի տալիս:
8. Հաղորդները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 դրան 10 շահի:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԴ

Արամեան դպրոցի 60-ամեայ յոթերեանի առթիւ, յոթերեանական հանդիսի օրուայ գիշերը, Արամեան դպրոցում, տրուելու է բանկէտ, մասնակցել ցանկացողները խնդրում է այդ մասին յայտնել, Փետրվար 12-15, յոթերեանական յանձնաժողովի նախագահ պ. Զ. Նազարբեկեանին:

Յոթերեանի օրը խօսել և ուղերձներ կարդալ ցանկացողները և խնդրում է մինչև Փետրվար 15-ը նախօրոք յայտնել յոր. յանձ. ի նախագահ, պ. Զ. Նազարբեկեանին: Ուշացողներին այլ ևս յոթերեանի ծրը, ծրագրից դուրս, հերթ չի տրուի խօսելու:

Յորել. Յանձնաժողով.

ԱՐԱՄ. ԴՊՐՈՑԻ 60-ԱՄԵԱՅ ՅՈՐԵԼ. Ի ՇՈՒՐՋԸ

## ՀԵՌԱԳԻՐ

Էնգելից.  $\frac{9}{22}$  Փետրվար, խփում 1 ժամ. 30 րոպէից \*)  
սացուած  $\frac{9}{22}$  ժամը 9-ին

### ԱԼԷԳՐՈՒՄ ՏԵՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Խնդրում ենք յանձն առնել մեր կողմից թարգման հանդիսանալ ամենանուիրական զգացմանց և բուռն արտայայտութեանց Արամեան դպրոցի 60-ամեայ արդիւնաւէտ գոյութեան յոթերեանական հանդիսին: Պատրաստուած ենք մի շքեղ երեկոյթով յաւերժացնելու այդ մեծ և ամենիս արտին մօտ տօնն: Զօնը փոստով կուղարկուի: Լիազօրում ենք արտայայտուել մեր կողմից:

Յոթերեանական մասնաժողովի նախագահ՝

Սիմէօնեանց

\*) Հեռագիր մեզ յանձնուից  $\frac{10}{23}$  փետր. ժամը. 2-ին Ա. Տ. Վ.

### ԻՆՉ ԱՐԻՆԷ

Առաջինը մենք „Մաքի“ էջերում հրապարակ հանելով և իրականացնելով փայլաշայլի Արամեան դպրոցի 60-ամեայ յոթերեանի կատարումը, այն անսուտ համոզումն ունէինք, որ առիթ համարելով այդ պատկառելի յոթերեանը, գլխաւորաբար տեղացիք պիտի աշխատեին ամեն ինչ, չնայելն ոչ մի զոհաբերութիւն՝ ապահովելու իրենց փրկութեան և լուսաւորութեան համեստ բայց մեծանուն հիմնարկութիւնը:

Յարդ մենք դեռ չգիտենք թէ ինչ են արել Թաղերգեցիք և ընդհանրապէս նրա նախկին սաներն

ու սանուհիները. գիտենք միայն այսօր, որ ամեն ինչ և ամենից շատ՝ հենց նրանք են պարտաւորանել: Եւ այս մասին մենք մեր պատճառարանութիւնները տուինք նախորդ համարի խմբագրականով:

Իսկ մեզ հասած նոր տեղեկութիւնները գալիս և աւելի ոյժ են տելիս մեր այդ առաջարկին:

Ինչպէս յոթերեանական յանձնաժողովի, այնպէս և բոլորիս յոյսն այն էր, որ մեծ օժանդակութիւն ցոյց կտային մեզ մեր Կովկասահայ եղբայրները:

Իայց նորա ևս ունին իրենց հրատապ հարցերը: Տառերի և հայ տպագրութեան Մեծ յոթերեանի

առթիւ նորա պիտի կազմեն զբարեկան ֆօնդ, կայ և գրական ֆօնդի հարց: Ապա Կովկասահայերի համար կան հայ թատրոնի ապահովութեան, սեպհական շէնքի, ուսուցչական թոշակարկի, գրողների ընկերութեան և նման բազմաթիւ հարցերի լուծումն ու հաստատութեանց ապահովումն:

Այս առաջին լինելով, բնական է, որ կովկասից սպասելիք մեր օժանդակութիւնը մեր յուսացած չափով չտեսցուի:

Ուստի .... ուստի մենք պիտի գլխաւորապէս օգնենք մեզ, մենք տեղացիք ու սաներ առատաձեռն ու զոհաբերող պէտք է լինինք մեր յոթերեան դպրոցի համար:

Երեւի արդէն սկսուած կլինի կամ շուտով կսկսուի յոթերեանական յարգոյ յանձնարարի հանգանակութիւնը Թաղերգում: Թող ոչ ոք իրեն ժլատ չձեւացնի թող ոչ ոք սակարկութեան մէջ չմտնի, այլ տայ լիաբուռն, յօժարակամ և աւելին քան կարող է կամ մտադիր էր տալ:

Այսպիսի 10-ամեակներ քիչ կպատահեն, իսկ պատահած առիթն էլ թող մենք չկորցնենք, կամ վարագոյրների յետև չմտնենք և «չունիմ» ու «չեմ կարող տալ» չասենք: Ուրիշից օգնութիւն սպասողը ամենից աւելի և ամենից առաջ՝ ինքն իրեն պէտք է օգնի:

Եւ այս օգնութեան գործում, ասել և կրկնում ենք, շատ բան կանեն ու կլրացնեն և մեր յարգոյ մայրերը, տիկիներն ու օրորները-դպրոցի նախկին սանուհիներն ու բարեացակամ տիկիները:

Դուք ևս առաջ եկէք, դուք էլ հրապարակ ելէք ազնիւ տիկիներ և օրորներ: Ինքնաբերաբար մի գործ ձեռնարկելը ձեր պատուի և գիտակցութեան համար շատ աւելի մեծ հուշակ է քան պաշտօնական հրաւերով գործ սկսելը:

Դպրոցը ձերն է, այնտեղ էք ուսել, այնտեղ են սովորել ու սո-

վորում են ձեր գաւաւները, ուստի դուք էլ պիտի լինէք այդ դպրոցի սիրողն ու փայփայողը: Ուրեմն դիմեցէք դէպի գործ: Մեր կարծիքով ձեզ դիմումն անել աւելի վերաւորանք կլինէր ձեր արժանապատուութիւն և գիտակցութեան:

Որքան և կարճ լինի ժամանակը, այնուամենայնիւ ձեր ձեռնարկը կպատկուի յաջողութեամբ: Զէ՛ որ ոչ մի բարեկիրթ և ճէնտումէն շրջանում ձեզ չեն մերժիլ: Արդ, մի խնայէք ձեր ազդեցութիւնը յօգուտ, յապահովութիւն և ի բարեգարգութիւն Արամեան դպրոցի, որ մասնաւորապէս իւր սան-ուհիներին իրաւամբ ուղղում է այս կոչը:

—Ի՞նչ արիք դուք ապահովելու իմ կեանքը:

Եթէ սան ու սանուհիներից, իբրեւրախտաւորութեանց, մենք գործ ու պարտավճարումն ենք պահանջում, այդ չէ նշանակում որ դորանից ազատ են մեր հասարակութեան միւս անդամները:

Դպրոցը ազգային հիմնարկութիւն է և ազգի իւրաքանչիւր մի անդամը իւր պարտաւորութիւնները պէտք է ունենայ դէպի հայ դպրոցը և մանաւանդ, ներկայ դէպքում, դէպի յոթերեան Արամեան դպրոցը:

Եւ մենք հրաւեր ենք կարգում ամենքին վաճառական, մանր առևտրական, արհեստաւոր, խանութպան, օղեվաճառ և այլն-փութան այս յոթերեանի առթիւ արձագանք տալ յանձնաժողովի կոչերին և ձեռնարկելիք հանգանակութեան: Ոչ ոքի գրամը, որքան և քիչ էլ լինի նա, արհամարհելի չէ: Ժողովրդական լուսաւորութեան գործում ինքը ժողովուրդը պիտի լինի իրեն սատարողը:



Արեգակնափայլ Նասր-էդ-դին Շահի\*)  
հրովարտակի բարգմանութիւնը

Հրովարտակ Արամեան դպրոցի  
250 թիւն. նպաստի մասին

Նասր-էդ-դին  
շահի կնիքը

Այն բոլոր ազգերը, որոնք ապաւինել են Պարսից դրօշակի տակ, նոցա կրթութիւնը մեզ անհրաժեշտ է:

Թաւրիզի հայ ազգաբնակչութիւնը հիմնել է մի դպրոց իւր գաւազնների կրթութեան համար նոցա սովորեցնելով մի քանի լեզուներ և գանազան գիտութիւններ: Ի խրախուսանս հիմնադիրների և ի յարատեւութիւն դպրոցի մենք շնորհեցինք 250 թումանի մի մուսթամիրի, ներկայ Հոգ-իւրից սկսեալ, որ պիտի վճարուի ամեն տարի 20% վեղջեւուց յետոյ:

Ով, պարսկական գահի ժառանգ \*\*, հսկիր, որ այս վերոյիշեալ գումարը վճարուի Թաւրիզի հայոց Արամեան դպրոցին հրամայիր որ Ատրպատականի ֆինանսական պաշտօնեաները գործադրեն այս վճիռը:

Ռաշաբ ամիս 1282 թիւ. (1865թ.)

\*) Այս հրովարտակը, ինչպէս յետոյ ընթերցողներ կտեսնեն Արամեան դպրոցի համառօտ և ընդարձակ մեր կազմելիք պատմութիւնից, ստացել է Ատրպատականի թեմի առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեանը, որ իր ծախսով Թէհրան է գնացել այդ նպատակով:

Սոյն հրովարտակը պարսկերէնից թարգմանել է և մեզ ուղարկել պրն. Վահան Անանեանը (մաքսատան պաշտօնեայ):

Թարգմանութիւնը կատարուած ճիշտ ըստ ընագրի:

\*\*) Անհարկում է թագաժառանգ Մոգաֆֆար-էդ-դինին-վիւրը շահ և պարսկ. սահմանադրութիւնը շնորհող: Ա. Տ.-Վ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ՈՂԲԵՐԿՈՒԹԻՒՆ\*  
(Исаимиръ Тетмайеръ)

— Չեմ հասկանում, ինչպէս թէ երկրներ իւր գոնեք կրանայ Ձեր առաջ:

— Լսիր ուրեմն... Իմ պապը քո հօր նման մի բանուոր է եղել...

— Այո, ես յաճախ լսել եմ քո պապի մասին, որ նա ախպէս բարի է եղել, ինչպէս մենք, իսկ նրա որդին, քո հայրը, մեր քրոջն ու արեւմուր հաւաքել է իւր ամբողջ հարստութիւնը, այո, յիշում եմ, յիշում եմ...

— Ճիշտ այդպէս, պապս հասարակ բաներից վարպետ դարձաւ, մի քիչ փող հաւաքեց ու թողեց հօրս, որին դեռ իւր կենդանութեան ժամանակ կրթութեան տուեց: Իմ հայրը սովորեց նախաձեռնել աղջկայ հետ, այն միջոցների, որը ածխահանք ունէր և իրեն օժիտ ստացաւ կէս միլիոն ռուբլի: Ամուսնութիւնից յետոյ նա ընկերացաւ Լիւկսեմբուրգի հետ և չգիտեմ ի՞նչ և ի՞նչպէս պատահեց ծերունի Լիւկսը

\*) Տես «Միտք» № 1,2

Ասրպատականի Թեմի առաջնորդ \*)  
Գեւորգ. Ներսէս վարդապ. Մ: Թագաբեկ

Ամիսներ առաջ, երբ տեղի ունեցաւ Հ. Միլիք-Թանգեանի ընտրութիւնը՝ պաշտօնապէս և այն էլ բազմիցս կազմալուծ հռչակուած և յոյժ թերակազմ թեմական ժողովի ձեռքով, մենք հզօրագոյնս այդ ապօրինութեան դէմ բողոքելով հանդերձ՝ աւելացրինք որ բարձրապատիւ Ներսէս վարդապետը կարող է և մեր ընտրելին լինել\*) և օգտակար թեմին՝ շնորհիւ իւր եռանդի, ուստաց լեզուի գիտութեան և իրաւաբան լինելուն:

Ապօրինութեան մէջ իրանց զօրաւոր և յամառ կարծողները մնացին ամօթահար և վերջը տեսան, որ մեր տեսակէտը արեւակաւորէն յաղթանակ տարաւ: Ընտրողների մեծախօսութիւնը, «Հորդոնում»՝ անտեղի էր, իսկ նոցա բարոյական պարտութիւնը ակնհեր և Վեհափառի օրինական վերաբերմունքը խիստ բնորոշ:

Եւ ահա այսօր մեր այդ ընտրելին Վեհի կողմից կարգուած է առաջնորդ: Ողջունում էք նորան և ցանկանում օգտակար առաջնորդութիւն և արթուն հովութիւն այն հօտին, որի մատաղ սերնդին, վասն հոգեփրկութեան, առանձին ջերմեռանդութեամբ, ձեռք է ձեռք են խլում, կրկնակի և եռակի քրիստոնեայ են դարձնում հեթանոսներին միայն աւետարանելու կոչում ստանձնած և իբր թէ եւրոպայից մեզ լոյս բերած միսսիոնարները:

Ներսէս վարդապետի ինչպէս նախորդ, նոյնպէս և այս անգամուայ քարոզներում յատկօրէն արտացոլում է մի լուսաւոր գիծ, մի անկեղծ շնչոյ:

Իսկ նորա ժողովրդավարականութիւնը՝ նիւ կողմն է: Փետրուար 3-ի իւր քարոզին (որին տարաբախտաբար ուշ հասանք) նա սրտագին արտաբերութեամբ նորէն ժողովրդին հրաւեր կարգաց դէպի հասարակական գործունէութիւն, հրաւեր կարգաց դալ, հաւաք

\*) Տես «Միտք» 1912 թ. № 29 «Բարձրակ խօսք» վերնադրով մեր մի յօդուածը:

մեռաւ կաթնածից. Ծիրիպալ Լիւկսը, որի անուամբ ինձ կնքել են, ինքնասպան եղաւ 11 տարի առաջ. իսկ Կարլ Լիւկսը և Ծիրիպալի այրին երկար ժամանակ դատ բաց արին իմ հօր դէմ և ես յաճախ լսել եմ թէ ինչպէս ինքնամատան կերպով ասում էր հայրս. «Ներսէս ինձ ի՞նչ կարող են անել. այն բոլորը որ այժմ Վիլհելմ Նէֆտցէի ձեռքումն է գտնուում, նոյն իսկ սատանան չի կարող նրանից խլել: Լսել եմ նոյնպէս թէ ինչպէս մայրս ասում էր. «Տուր նրանց փող, թէկուզ քիչ, թող նրանք մեզ հանգիստ թողնեն»: Իսկ հայրս պատասխանում էր, «միմտոյն է նրանք մեզ շուտով հանգիստ կթողնեն, որովհետեւ փաստաբաններին տարու այլևս դրամ չունին. յիշիր այս խօսքերը, կգայ մի ժամանակ, երբ Կարլը իմ գործարանում տեղ կլինդիր»:

Աղջիկը լսում էր, սակայն յանկարծ ասաց:

— Այո, ես լսել եմ որ քո հայրը քիչ մեղքեր չունի և քիչ մարդկանց չէ դժբախտացրել նա: Դուք ինձ վերայ չէք բարկանայ:

— Ո՛չ, ո՛չ, ասա...

— Ասում էին... ես վախենում եմ:

— Մի վախենար, ասա, ... ես խնդրում եմ քեզ...

ուել իւր շուրջը և միասին գործել...

Այն ոյժն ու կարողութիւնը, որ այդպէս բարձր է գնահատում ժողովրդական օգտաշահ գործակցութեան կարիքը և անհրաժեշտութիւնը, ըստ ամենայնի արժանի է ժողովրդի գուրգուրանքին և փոխադարձ օգնութեան:

Սորանով մենք դիմում ենք մեր յարգոյ հասարակութեան՝ արձագանքել մեր նորեկ առաջնորդի այս ազնիւ կոչին, ստեղծելու մի հզօր ու պատկառելի առաջնորդարան, ուժեղ ժողովուրդ և եռուն հասարակական կեանք:

Մեր թեմական իշխանութիւնը շատ է տուժել այս վերջին տարիներում: Ժողովրդի «ներկայացուցիչ» համարուածները շատ են աքացել նորան և իջեցրել մինիմումի նորա բարձր հեղինակութիւնը մեր և արտաքին իշխանութեանց առջև:

Դեռ կան իմիջի, և այն էլ առանձին կողմով իրարմամբ, այն «հերոսները», որոնք դեռ երէկ և այն էլ պատգամաւորական ժողովում, կարմիր երևալու համար, բարձրաբարձր գոռում էին չէզօքացնել Էլմիստի (իւր կողմական յետադիմական կետերն)՝ գերիշխանութիւնը մեր թեմական գործերում և նսեմացնել առաջնորդի դիրքն ու դերը մեր տեղական ազգային—կրթական հասարակական հարցերում:

Եւ այդ յոյժ եպերելի իմաստակների ու իմաստակութեանց պատճառով մինչև իսկ կանգ առաւ թեմ. կանոնադրութեան վերամշակութիւնը:

Ամենագէտ ժամանակին, անշուշտ, այժմ շատ բան սրբադրած կլինի մեր այդ սուտ և վասն ցուցամուրթեան միայն արմատականների հիւանդ ուղեղներում: Եւ, երեւի, մեր օրերի այդ թզուկ ժակօրէններն այլևս իրենց հին արգելքները չեն յարուցանի առաջնորդութեան շուրջը և կթողնեն որ իրաւատէր ժողովուրդը անկաշկանդ և գիտակցօրէն մօտենայ իր ընտրութիւններին և բերէ իր ցանկալի գործերը:

— Ես...

— Բայց ես քեզ հրամայում եմ խօսել:

— Թող այդպէս լինի, կասեմ: Ասում էին և այն էլ շատ յաճախ այդ շէկ շուրջը (այդպէս էին անուանում Ձեր հօրը) գողութեամբ այդքան հարստութիւն ղեղեց: Նրան պիտու հուսնէին զգուշի, սրիկայ, Ոչ որ խօսակցութեան ժամանակ նրան այլ կերպ չէր կոչում քան «շէկ շուն» և առհասարակ երբ ասումն էր, «շէկ շուն» բոլորը հասկանում են թէ հում մասին է խօսքը:

Երիտասարդը գողում էր ամբողջ մարմնով. նա ծածկել էր իւր հրեւը ձեռներով:

— Դուք ինձ վրայ բարկացած չէք, կռանալով դէպի նա, շնչաց աղջիկը: Իսկ երիտասարդի սրտից դուրս պոռթկացին դառն ու սարսափելի հեծկլտանքները, որպէս արեան լերդացած կաթիլները թթախտաւորի սրտից:

— Ի՞նչու էք լալիս, շնչում էր Իւզեան, ի՞նչու էք լալիս...

Երիտասարդ Նէֆտցէն ընկաւ երեսի վրայ գիտին և հեկեկալով թալըրտում էր հողի մէջ:

— Լսեցէք, սկեց աղաղակել վախեցած աղջիկը, աշխատելով բարձրացնել նրան գետնից:

Ժակցութիւնը ի նպաստ թեմի իշխանութեան, որ ցարդ եղել է բաւական անկանոն, անազգեցիկ, արհամարհ, գտնուել է թոյլ ձեռքերում և՛ անձեռնհաս փոխանորդութեան երերուն «ղեկավարութեան» ներքոյ:

Եթէ հայր առաջնորդը դուրս կըկորդի մեր ժողովրդին իր անտարբերութիւնից և իւր թեմակալութեան օրօք առաջ կըբերի ժողովրդական ներկայացուցչութեան հարազատ, հեղինակաւոր և ընդունակ ու կարող կազմ և այդ կազմով կփրկի մեր կրթական նսեմացած հաստատութիւնները խորթ խնամակալութիւններից ու խաբիսփոռներէից և դրանց՝ (հիմնարկութիւններին) իրանց ներքին աշխարհի անբովանդակութիւնից, ապա դա կլինի նորա անմոռաց ու գնահատելի գործերից մէկը:

Կայ առաւել անհրաժեշտը:

Երբ Արամեան և Ս. Անայեան երկուսն զպրօքների հոգաբարձութիւնը և ուսուցչական կազմը միատեղ այցելութեան գնաց հայր առաջնորդին, վերջինս յայտարարեց, որ իր գործունէութիւնը չի ունենայ յետին գիտութիւն և չի ճանաչի կողմ:

Այցելուներն իրենց ուրախութիւնը յայտնեցին այդ յայտարարութեան համար:

Արդ, որքան մեր յարգոյ թեմակալը կերթայ այդ ուղիով ապա անպակաս կլինի ժողովրդի աջակցութիւնը և մեր էլ համակրանքն ու գործակցութիւնը:

«Միտք» իբրեւ հասարակական խղճի և մտքի ներկայացուցիչ՝ կարող է միայն յաջողութիւններ ցանկանալ այդպիսի անաչառ առաջնորդին, իսկ հաւատակ ընթացողի դէմ նա դուրս կըգայ իր անվերապահ պայքարով:

Արդ, բարի գալուստ հ. Միլիք-Թանգեանին, յաջողութիւններ, իմաստուն ու շրջանայեաց առաջնորդութիւն, նորան ի պատիւ՝ մեզ ի բարձրացումն և ի հպարտութիւն:

Ա. Տ. Վ.

Բայց շուտով Նէֆտցէն ինքը բարձրացաւ ու նստեց իւր տեղը «Ասա էլի» հրամայար ասաց Կայ, հպրէ զսպելով արցունքները, «պատմիր մարդիկ էլ ինչ են ասում իմ հօր մասին»:

— Չեմ շարունակի... Դուք լալիս էք:

— Էլ չեմ լայ, խօսիմ:

Նա աղաղակեց և պղծիկը նորից սկսեց պատմել:

— Ասում էին, ո՛վ և երբ վերջապէս վրէժխնդիր կլինի այդ գարշելի շնից նրա մարդկանց պատճառած չարիքների համար:

— Այսպէս էին ասում:

Երիտասարդը վեր թռաւ կոճղի վրայից:

— Գնանք, քաշեց նա բռնելով աղջկայ ձեռքը:

— Ո՛ւր, հըր գնանք:

— Այնտեղ, ցոյց տուեց գլխով զդեակը:

— Այնտեղ, ի՞նչու, այնտեղ մենք չենք կարող մտնել. միայն պատգամաւորները... կատաղութեամբ գոչեց պատանին, դու կլինիս պատգամաւորուհի, գնանք:

(Շարունակելի)



ՄԱՍՈՒԼ

„ԱՐԱՄԵԱՆ“ դպրոցի 60-ամեայ յոբելեանական յանձնաժողովի կոչե-  
րին, արտասահմանեան մամուլինց,  
առաջին արձագանք տուողը եղաւ  
„Մշակ“-ը, որ շատ ու շատ անգամ-  
ներ է ձայն բարձրացրել յօգուտ Պարս-  
կահայերի:

„Արամեան“ դպրոցի 60-ամեայ  
յոբելեանին № 22 „Մշակ“-ում մի  
հրապարակաբաւ և Արամեան դպրոցի  
ամենահին սան պ. Ն. Առաքելեանը:

Առաջ ենք բերում պ. Ն. Առա-  
քելեանի գրուածքից հետեւեալը.

.... Եւ գրեթէ 60 տարի ամբողջ  
..... «Արամեան» դպրոցը եղաւ  
միակ կրթարանը, որ լոյս և գի-  
տութիւն սփռեց համայն Ատրը-  
պատականի մէջ, որ հայ լեզուն,  
հայ գիրը, հայ երգը տարածեց,  
որ մտքեց հայ ժողովրդի մէջ  
գիտակցութիւն, ինքնաճանաչու-  
թիւն, որ պատրաստեց տանեակ  
սերունդներ կեանքի պայքարի հա-  
մար:

Եթէ Ռուսաստանի և Թիւր-  
քիայի հայկական հոծ զանգուած-  
ների մէջ 60-ամեայ հասակ ունե-  
ցող կրթական հաստատութիւնները  
թուով շատ քիչ են, Պարսկաստանի  
մէջ այդպիսի պատկանելի հասակ ու-  
նեցող և կրթական ազգային և կրթա-  
կան առաքելութիւն կատարող միակ  
հաստատութիւնը ԱՐԱՄԵԱՆ դպրոցն է  
եղել:

Ահա այդ հաստատութիւնը  
այս փետրով 19-ին տօնում է իր  
60-ամեայ գոյութեան յոբելեանը  
նա լոկ մի տեղեկան, մասնաւոր  
տօնախմբութիւն չէ. նա արժէ,  
որ իր վրայ դարձնէ նաև այլ տե-  
ղերի և երկիրների հայութեան  
ուշադրութիւնը իբրև հայ ազգի  
քաղաքակրթական գլխաւոր գոր-

ԵՐԿՈՒ ԴԵՐՎԻՇ\*]  
(ԷՏԻՈ)

—Այո, պատասխանեց նա. ես սի-  
րել եմ ու դեռ սիրում եմ. նա չի  
հեռանում իմ մտքիցս ու աչքիցս. իմ  
սիրած գեղեցկուհին հասարակ հողեղէ-  
նի չէ նման. նա աւելի գեղեցիկ է  
այն բոլոր գեղեցկուհիներից, որոնց  
դու կարող ես երևակայել... նրա նը-  
մանը չես գտնիլ ամբողջ Իրանում:  
Նրա չքնաղ դէմքը, հասակը, նրա զոյգ  
սև ու խոշոր աչքերը...

Նրա այն անկարագրելի ժպիտն  
էր, որ յաւիտեան շղթայեց ինձ իր  
հետ... Օ պարոնս, եթէ իմանայիր,  
որքան լաւն է նա... Ահա և ինքը, նա,  
որի մասին պատմում եմ, ասաց դեռ-  
վելը, յանկարծ ցոյց տալով պատուհա-  
նի վրայ: Ես շուտ եկայ և տեսայ պա-  
տուհանի առաջ կանգնած. ինչ՞ մի  
սոսկալի պատաւ, մի կատարեալ կմա-  
խք գեռ աւելի զարհուրելի քան կմախ-  
քը: Նա փաթաթուած էր մի ինչ որ  
կեղտոտ ու զգգուած լաթի մէջ:  
Նրա մէջքը այնքան էր կորացել, որ  
ձեռքի կեռ փայտի հետ մի ձուռձեւ  
շրջան էր կազմում: Աչքերի փոխարէն  
ինչոր փոսեր էին երևում, իսկ յոն-  
քերի տեղ ինչոր սպիտակ փշեր... նը-  
րա կիսաբաց բերանից երևում էին մի  
զոյգ սևացած ժանիքներ: Պառաւր  
Թոյլ, անախորժ ձայնով, հազիւ շունչ  
բաշխելով, կանչեց՝ սղորմեցէք...  
\*) Տեա՛ս „Միտք“, № 2

ծօններից մինը:

Մենք Պարսկահայի բարգաւաճ-  
մանը ջանադիր «Մշակից»-ից և յատ-  
կապէս պ. Ն. Առաքելեանից սպասում  
ենք շատ աւելի դրական քայլեր ի  
յաւերժացումն, ի յարատեւում և յա-  
պահովութիւն յոբելեար Արամեան  
դպրոցի:

ԼՈՒՐԵՐ

Թաւրիզ.

Ի լրացումն մեր յայտնած նա-  
խորդ տեղեկութիւնների այժմ աւե-  
լացնում ենք, որ առաջնորդ Ն. Մ.  
Թանգեանի գալուտեան առթիւ օսման-  
եան հիւպատոսն ևս ընդ առաջ էր  
ուղարկել իր կողմից մի ներկայա-  
ցուցիչ, չափ Շօջաէ-Դովլէտ ևս՝ 8  
հեծեալներ, քարկուզար՝ մի եղակ:

Փետրով 3-ին պատարագի մի-  
ջոցին կարգացուեց Վեհափառի Կոն-  
դակը գերապատիւ Ներսէս վարդապե-  
տին Ատրպատականի թեմի առաջնորդ  
կարգելու մասին: Պատարագից վերջ  
հայր առաջնորդը խօսեց քարոզ, հրա-  
ւէր կարգաց հասարական գոր-  
ծունէութեան և յորդորեց գնալ Դա-  
լա թաղի պատուիրակային ընտրու-  
թեան, ինչպէս որ յայտարարուած էր:

Կալայի պատուիրակային ժո-  
ղովը չկայացաւ, հապճեպ կատարուած  
յայտարարութեան պատճառով:

Նոյն առթիւ առաջնորդարա-  
նը ուրբաթ օրուայ ժամի 10ի համար  
փետրվար 8-ին դարձեալ գրաւոր յայ-  
տարարութիւն էր տուել, ժողովն ըն-  
դունելով երկրորդ ժողով: Զնայելով  
նախքան յայտարարութեան ցրումը մի  
օր առաջ մենք ներկայացանք առաջ-  
նորդ հօրը և օրը անյարմար յայտնե-  
ցինք ժողովի համար՝ թէ մարդ չի  
գալ, այնուամենայնիւ ցրուեցաւ ազգը:  
Յաջորդ օրը բացի մի հոգուց-պ. Մել-  
քոն Աֆթանդիլեանից, ոչ ոք չէր եկել

Ես հարցական հայեացք ձգեցի  
դերվիշի վրայ: Նա դառն ու հեգնա-  
կան ծիծաղով ձեռքը մեկնեց. դէպի  
պառաւն ու պսպր:

—Նայիր դեռ երէկ էր, որ այդ  
գեղեցկուհուն սիրում էի, կարծես ե  
րեկ էր, որ մի ամբողջ հասարակու-  
թիւն վազում էր սորա յետեից և բո-  
լորն էլ պատրաստ էին սրբա՛նքի  
տակ դնելու իրենց կեանքն ու գոյու-  
թիւնը... Սա այն չարածի, գանգուր  
մագնիսով, խոշոր աչքերով աղջիկն է  
որն իւր գեղեցիկ մօր գրկում կամ  
ծնկներէ վրա խաղալիս ամեն մի ար-  
տասանած խօսքովն նոր կեանք էր  
տալիս թէ ծնողներին և թէ շրջապա-  
տողներին, իսկ այժմս դու զարհուրում  
ես, դու չես ուզում նայել նորան ու  
երես ես դարձնում նորանից... Օ  
Փանի, բացակայից քերվիշը, բար-  
ձրացաւ տեղից ու գուրս գնաց սեն-  
եակից: Ծառան մօտեցաւ պառաւին  
տուռաւ նրան մի զրամ ու ցածր ձայ-  
նով ասաց, — Անցիր, պառաւ գնա  
շուտ:

Ես նայում էի թէ ինչպէս խեղճ  
պառաւը, կամաց կամաց հազիւ շուտ  
եկաւ և հազիւ հազ դաբեքով փոխելով  
առաջ շարժուեց հանդարտ տեղացող  
անձրևի տակ: Այդ միջոցին զրախ լս-  
ւեց դարձեալ դերվիշի երկար բացա-  
կանչութիւնը,  
—Օ, Փանի...

IV

Գարնան վերջին, մի գեղեցիկ ու

ընտրութեան Արամեան դպրոցի սրա-  
նը, առհասարակ հապճեպի պէտք չկայ:  
Պէտք է միջոց տալ հասարակութեան  
և գիտեալ ո՞ր օրերին ժողովուրդը  
աւելի ազատ կլինի և ժողովի կըզայ:  
Պէտք է այնպէս անել, որ առաջնոր-  
դարանի իւրաքանչիւր ազգն ու հրա-  
ւէրը առանձին հանգիստութեամբ  
հնչի ժողովրդի ականջին և հէնց ա-  
ռաջին իսկ կոչին նրան բերի ժողովի,  
և ոչ թէ պարտք կատարելու համար վը-  
րայ վրայազգեր տալ, գիտնալով հանդերձ  
որ ժողովուրդ չի գալ, արդարանա-  
լու, թէ երկրորդ հրաւէրն ևս եղել է  
երրորդին որքան քիչ էլ լինի ժողո-  
ւածների թիւը օրինական կհամարուի:  
Յուսով ենք մեր նորեկ առաջնորդը  
կյարգի մեր այս կարծիքը և այլոց  
նման մեզնից չի նեղանայ:

Ամսոյս 5-ին առաջնորդ Մելիք-  
Թանգեանը պ. Զ. Նազարբէկեանի  
հետ ներկայացաւ նահանգապետ Շօջա-  
է-Դովլէտին, որից տեսակցութեան ժա-  
մը առաջնորդի համար խնդրել էր պ.  
Նազարբէկեանը:

Ամսոյս 8-ին, ուրբաթ օրը Ֆը-  
րանսական հիւպատոս պ. Նիկոլան  
եկել էր առաջնորդին այցելութեան.  
խօսակցութիւնը եղել էր պարսկերէն.  
Թարգման եղել է Հմայակ քահանայ  
Ներսիսեանը:

Ամսոյս 9-ին ժամը 5½-ին ա-  
ռաջնորդի հրաւէրով առաջնորդարան  
էին հաւաքուել երեք դպրոցների ու-  
սուցչական խմբերը խորհրդակցելու  
Վարդանանց տօնի միասին կատարելու  
մասին:

Այդ մասին բացասաբար արտա-  
յայտուեց թերթիս խմբագիրը, Պ. Ա.  
Մելիք. Արքանամեանը Պ. Պի-  
օնեանը և Լիւաի ուսուցիչ պ. Ս.  
Մելիք Վարդանեանը այն առարկու-  
թեամբ, որ տօնը մի թաղում կատա-  
րելիս միւս թաղի հասարակութիւնը  
մեծ մասամբ կանայք աչքադէպ չեն գնայ,  
իսկ այդպիսով մի թաղ կդնուի հան-

հրաշալի առաւօտ եւ հեծելանիւր նըս-  
տած շտապում էի այն ուխտատէրին,  
որտեղ այդ օրը մեծ բազմութիւն պի  
տի հաւաքուել երիտասարդներից: Երբ  
հասայ ուխտատէրին, ցած իշպայ և  
բարձրացայ դէպի վերև, գեղեցիկ ծա-  
ռերի ու թփերի միջով, քիչ յետոյ  
յանկարծ կողքիս նկատեցի դերվիշին,  
որը մօտեցաւ ինձ իւր սովորական  
բացականչութիւնով:—Օ՛ ֆանի...

—Օ բարև դերվիշ:— Բարև կրկնեց  
նա:—Գնանք միասին ինձ հետ ասացի  
ես նրան:—Գնանք պատասխանեց նա:  
Մենք բարձրացանք դէպի վերև և ըն-  
տրեցինք մեզ համար մի յարմար տեղ,  
որտեղից դիտելու էինք բոլորին: Ես  
սաստիկ յոգնած էի, ուստի պառկեցի  
կանաչ խոտի վրայ, պառաւակի կողքին,  
մի գեղեցիկ նշնուռ տակ և սկսեցի  
ծխել: Դերվիշը նոյնպէս մօտ նստած  
ծխում էր: Մենք խօսում էինք... Այդ  
միջոցին մեր մօտից քիչ հեռու անց-  
նում էր մի երիտասարդ, մի գեղեցիկ  
օրիորդի հետ, նրանք անցնում աւ հե-  
ռանում էին բազմութիւնից, դէպի  
խիտ ծառերի ու թփերի կողմը, թե-  
անցուկ իրար յենուած: Նրանք խօ-  
սում էին: Մենք հազիւ լսեցինք նը-  
րանց վերջին մի քանի բառերը:—Ես  
քոնն եմ, սիրելիս, տար ինձ, ուր կու-  
զես, տար ասում էր օրիւրդը գուրբը  
յենելով երիտասարդի կրծքին, իսկ  
տղան սեղմելով նրան իր կրծքին ա-  
մոք ասաց, — Օ, դու իմ երջանկու-  
թիւնն ես, քեզ հետ միասին դժոխքն  
ինձ համար զրախ է... Նրանք հե-  
ռացան... մենք այլևս չէինք լսում

դիսից: Կենտրոնականի տեսուչ պ.  
Դաւթեանը միասին տօնելու կողմնա-  
կից էր: Վճռուեց ըստ առաջնոյն տօ-  
նել երկու թաղերում զատ զատ:

Ռումանովների թագաւորութեան  
300 ամեակի առթիւ ամսոյս 20ին հեր-  
դաթաղի Ս. Ածածին եկեղեցում կըլի-  
նի մաղթանք և փոխարքային առաջ-  
նորդի և ժողովրդի կողմից կարուի  
շնորհաւորական հեռագիր:

Իբր արձագանք «Մտքի» նախորդ  
համարի խմբագրականի՝ լսում ենք  
որ մի կարգ տիկիներ և օրիորդներ  
կազմել են խմբեր Արամեան դպրոցի  
յոբելեանի առթիւ վիճակախաղի նիւ-  
թեր հաւաքելու, նաև ներկայացում  
տալու համար:

Նախորդ համարում թուականը փո-  
խանակ լինելու 3 փետրվար ֆնացել է  
28 փետրվար. (№ 1-ի թիւն էր 28  
Յունուար) № 2-ի սրբագրութեան ժա-  
մանակ ամիսը փոխել էին իսկ թիւը  
թողել նոյնը:

Արամեան դպրոցի 60 ամեայ  
յոբելեանի առթիւ, փետրվար 19-ի  
համար յոբելեանական յանձնախմբի կող-  
մից հրաւէրներ կուղարկուեն քաղաքիս  
միւս հայ և օտար դպրոցների տեսուչ-  
ներին, կանանց դեկ.-թեան և աղքատա-  
խնամի վարչութեան:

Մտածւում է հանդէսը կրկնել  
և կէսօրից յետոյ և կանչել եւրոպական  
և տաճկաց հիւպատոսներին, եւրոպա-  
կան գաղութի ներկայացուցիչներին:  
Յորեկանի գիշերը — փետրվար 19-ին  
Արամեան դպրոցի ուսուցչակս՝ խում  
մը կտայ մի յոբելեանական ներկայա-  
ցում մատչելի գներով: Կներկայացնեն  
2 փողովիներ, Զարանճիմ եւ Թանգա  
գին Համբոյը:

Ամսոյս 3-ի գիշերը Արամեան  
դպրոցի ուսուցչական խումբը տուեց  
մի ներկայացում յօգուտ «Միտք» թեր-  
թի:

Ներկայացումն անցաւ խիստ յա-  
ջող և ուրախ առանձին ֆուրօր հա-  
նրանց որովհետեւ շատ էին հեռացել  
մեզնից:—

—Տեսնում ես դերվիշ, հարցրի ես  
նրան, լսեցի՞ր նրանց ասածները տեսնում  
ես որքան երջանիկ են նրանք, ահա  
քեզ երջանիկ մի գոյգ:—Այո, տես-  
նում եմ, տեսնում եմ այդ քեռաւո-  
նեին ասաց դերվիշը մօտենալով ինձ  
մի ձեռքը ուսիս դնելով, իսկ միւսը  
մեկնելով նրանց, ցածր ձայնով ասաց,

—Իսկ դու տեսնում ես, նայիր,  
տես ահա իմ „Ատուռածը“, դա՛՛՛՛՛՛՛՛ն  
է, տեսնում ես ինչպէս է նա մեկնել  
իւր հակայական ուժեղ ձեռները բըռ-  
նելու, մօտեցնում է այդ երկուսին  
միմեանց ասելով, «շուտ արէք, տուէք  
ձեր ժառանգը, դուք արդէն գրուեցիք  
զոհների ցուցակում, հաղարտւոր քաղ-  
ցած միջատներ ձեր դիակին են ըս-  
պասում... և տես, սա ազգանշանն է,  
զոհների շարքն ընկնելու, սա ազգանը-  
շանն է կեանքի ասպարէզը յաւիտեան  
թողնելու և տեղ տալու նոր եկողին,  
իսկ այդ ազգանշանը նրանք երջան-  
կութիւն են համարում... Օ ֆանի —  
բացականչեց դերվիշը, դառն ժպիտ  
արձակելով ու լռեց:

Ես դեռ նայում էի այդ հեռացող  
զոյգին, որ հետզհետեւ գնալով անյայ-  
տացան աչքիցս: Դերվիշն էլ վեր կա-  
ցաւ իւր տեղից գնաց դէպի ամբոխը  
ու նոյնպէս անյայտացաւ աչքիցս:  
Ես նստած շարունակ դիտում էի բազ-  
մութեանը, բայց ոչ մի փոփոխութիւն  
չգտայ նրանում, բացի զոյգի հեռա-  
նալուց և դերվիշի մօտենալուց: Քիչ  
անց, ես էլ բարձրացայ տեղիցս ու  
գնացի բազմութեան մէջ որոնելու  
ծանօթներին... (Շար) Տ. Պոդ.



